Շավարշ Կարապետյան

Սպորտի վաստակավոր վարպետ, ԽՍՀՄ ստորջրյա լողի 7-ակի չեմպիոն, 15 անգամ արժանացել է ԽՍՀՄ գավաթի, 11 անգամ դարձել աշխարհի ռեկորդակիր, 17 անգամ՝ աշխարհի չեմպիոն, 13 անգամ՝ Եվրոպայի չեմպիոն, հռչակվել մոլորակի լավագույն լողորդ:

Ծնվել է 1953թ. Կիրովականում (այժմ՝ Վանաձոր):

1976թ. սեպտեմբերի 16-ին հայտնի մարզիկի սխրանքի շնորհիվ փրկվել է 20 մարդու կյանք. Տրոլեյբուսն ընկել էր Երևանյան լիճը՝ ընկղմվելով 10 մետր: Շավարշը նետվել է ջուրը և, կոտրելով տրոլեյբուսի ապակին, սկսել մեկառմեկ դուրս բերել սրահում գտնվող ուղևորներին: 44 րոպե անց տրոլեյբուսը ջրից հանել են վերստին մարզիկի օգնությամբ. նա, վերջին անգամ սուզվելով ջուրը, պարան ամրացրել է մեքենային, ապա, ափ հասնելով, ուշաթափվել: Ստացել է արյան վարակում և մեկուկես ամիս բուժվել հիվանդանոցում: Այդուհանդերձ կարողացել է վերադառնալ մեծ սպորտ և սահմանել համաշխարհային ռեկորդ: Որոշ ժամանակ անց տեղի է ունեցել մեկ այլ արտակարգ պատահար՝ հրդեհ մարզահամերգային համալիրում: Շավարշը վերստին շտապել է օգնության՝ փրկելով բազմաթիվ կյանքեր: Այրվածքների պատճառով մեկ շաբաթ բուժվել է հիվանդանոցում: Առողջության վատթարացումը թույլ չի տվել շարունակել մարզական ուղին կարիերան:

Այժմ ՌԴ ստորջրյա լողի ասոցիացիայի պատվավոր նախագահն է:

Ապրում և աշխատում է Մոսկվայում: